



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎԱՐՋԱՏՐՈՒԱԾ ԻԶՄԻՐԵԱՆՑ ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ 1512-Ի ՄՐՑԱՆԱ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ 1512 — 1932

ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ
(1846-1863)

ԹԱՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

- | | |
|--|------------------------|
| 1.— Յագակ Ռուսահայ թերթերու (1846—1863) | |
| 2.— Յակոբ Կարինեանց | 3 լուսասիւ պատկերներով |
| 3.— Գաբրիել Քճ. Պատկանեա՝ | 7 " " |
| 4.— Բաղիշեցի Շանիուրասի Ծ Գառ Գամբարդուքիւնք | |
| 5.— Սիմայիկ Նալբանդեանց | 4 լուսասիւ պատկերներով |
| 6.— Դամաս Բաքիայա | 6 " " |

ՊԵՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏՆԱԾԱՐ ԹԻՒ 2

ԳՐԱՏՈՒՆ

ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ «ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ»

ԳԱՀԻՐԷ

1932

ՀԱՅ ԼՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

(1876)




Հայ լրագրութիւնը ծնաւ Մատթա-
սի մէջ 1794ին ուր առաջին լրագրերը
հրատարակեց Զարուի Քն. Շմառնե-
կան՝ Ազգայնոց անունով։ Իսկ ետք
հայերէն թերթերը հրատարակուեցան
Հոգևատան, Վենետիկ, Աւստրիա և
Թուրքիա, հինգերորդ տեղը կը գրաւէ
Կովկաս՝ ուր հրատարակուած է Յակոբ
Կարինեանէ՝ Կովկաս անուն թերթ մը
1846ին։ 1846էն 1880 կը հրատարա-
կուին Ռուսիոյ մէջ բնակւոյն 21 թեր-
թեր որոնց ցուցակն է։

- 1 Կովկաս — 1846-1848 թիֆլիզ
թմրագիրներ Զ. Կարինե-
անց և Միք. Պատկանե-
կան։
- 2 Աւարուս — 1850-51 թիֆլիզ Գար-
րիկի Քն. Պատկանեան։
- 3 Հիւսիսասիայ — 1858-1864 Մա-
կուս Սա. Նազարեանց և
Միքայէլ Նալբանդեանց։
- 4 Նուսիայ — 1858-1862 Մակուս
Մալխարուս և Զարմայր
Մսերեանց։
- 5 Մեղու Հայաստան — 1858-1886
թիֆլիզ Սա. Քն. Մանգինե-
անց և Պետրոս Սիմեոնե-
կանց։
- 6 Կոստնիկ — 1860-1863 Համբարձում
Խնդիկեանց և Մարկոս

Յիւստակարան 2

- 7 Համբարձում Ռուսիոյ — 1860-3
Մակուս Մ. և Զ. Սե-
սերեանք։
- 8 Հիւսիս — 1863-64 Ս. Պետրոսե-
ր՝ Ռ. Պատկանեան։
- 9 Հայկական Ասիայ — 1864-1878
թիֆլիզ — Ստեփաննոս
Ստեփանեան։
- 10 Գարուն — 1866 թիֆլիզ Ս. Վոն-
նա Քն. Մանգ. անց
- 11 Վանատական — 1866 թիֆլիզ Գ.
Տէր Ազեքսոն և անց։
- 12 Աւարուս Վաղարշապատ — 1868-
1914 Հրատ. Զմեմանայ
Միսթանու թիւ։
- 13 Գաւառական — 1872-1874 Էս-
թրեան։
- 14 Մեակ — թիֆլիզ 1872-1914 Գրի-
գոր Արծրունի և Հ. Ա-
ւստեան։
- 15 Փարոս — 1872 - 1876 Մակուս
Զարմայր Մսերեանց։
- 16 Գաւրոյ — 1874-76 Վաղարշապատ
Վանան Վ. Բաստամեան
- 17 Փորձ — 1877-81 թիֆլիզ Արդար
Յովհաննէսեան։
- 18 Մանկավարժական Թերթ 1878-79
թիֆլիզ, Յակոբ Տէր
Յովհաննէսեան։
- 19 Հայկական Ասիայ 1879 Երեւան



- 20 Բարսի Հայրասանի Մոսկովա
1879-1881 Զարմայր
Մահերան
21 Առխասանի Թիֆլիզ 1881-81

ՅԱԿՈԲ ԿԱՐԻՆԵԱՆՑ

Յակոբ վարժապետ Կարինեանց Կարինէն Կովկաս գաղթած էր 1829ին Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և այդ պատճառաւ մինչեւ վերջ յիշւած է Կարնոյ գաղթական Յակոբ Վարժապետ անունով։ Իր ծննդեան թուականը անձանօթ կը մնայ 1837-1847



1 Յակոբ Կարինեանց
խմբագիր Կովկաս քերթի

Թուականներուն կը գտնենք զինքը իբր ներսէսեան Դպրոցի ուսուցիչ, իր զիրքը հազնեաէ կ'աւելնայ և զերիշխող զեր մը կը սկսի կատարել վարժարանին մէջ։ Նոյն թուականնե-

րուն քարտուղար էր Կոնստանտին Սահայն վարժարանն իր վարչութեան տակ կ'առննայ աւելի յոսի ուղղութիւն մը մինչեւ որ 1847ին քօլերայի պատճառաւ տարի մը կը փակուի վարժարանը և 1848ին Ներսէսի Կաթողիկոս ընտրուելովը նոր աւժ և ուղղութիւն կը ստանայ։

1841 թուականին երբ իշխան Վարչապետ Կովկասի կառավարչապետ Նախիւշեյա, երկիրը նոր փոփոխութիւն կրեց, հաշիւ թէ նա Տփլիս կը մտնէ, կը ձեռնարկէ հրատարակել «Կովկաս» անուն շաբաթաթերթ մը Ռուսերէն, Հայերէն, Վրացերէն և Թուրքերէն լեզուներով։

Հայերէն մասը «Կովկաս» անունով հրատարակուել սկսած է 184 ին Յունվար 12ին իբր շաբաթաթերթ՝ Կոստանդինովի խմբագրութեամբ, և որովհետեւ պատասխանատու խմբագիրը Հայերէն չէր գիտեր, խմբագրութիւնը կը վարեն Կարինեցի գաղթական Յակոբ վարժապետ Կարինեանց և Ներսէսեան հոգեւոր գործնոցի տեսուչ Միքայէլ Պատկանեան (կըրայր Գորբիէլ քհնյ. Պատկանեանի)։

«Կովկաս» Ռուսահայոց սոսջին թերթըն է և աւելի Ռուսական կառավարութեան օրկանը։

Մեր աղբիւրները երկու տեսակ կը գտնեն այս մասին, Արաքս (1897 զիրք Բ. էջ 157) Յակոբ Կարինեանցի հետ խմբագիր ըլլալը կը յիշէ նաեւ Լազարեան ճեմարանաւարտ Աստրախանցի Յ. Արզանեանցը, որ ծանօթ է կըրօր Դուախթ Արզանեանցի հետ Ռուսերէն լեզուաւ հրատարակած «Հայոց թագաւորութեան փորձը» անուն միեմագիր գործովը, ընտիր հրատարակութիւն մը Հայ թագաւորներու 26 պատկերներով։



կտրելորով իւնը զորս պիտի ստանար տարիներ յետոյ— գանձարաններու մէջ մթերուած այդ թանկագին ձեռագիրները:

Յակոբ Կարինեանց իր ուսուցչական ապարէզին թիրուծովը գրած է նաեւ մէկ քանի պատմական թատերգութիւններ որոնք խանդավառութեամբ ներկայացուծ են Թիֆլիզի մէջ

60-ական թուականներուն:

Մեզ անձանօթ կր մնայ Կարինեանցի մահուան թուականը, սակայն կրցանք ներկայացնել իր լուսանկարը զոր հայթայթեց մեզ յայտնի հրատարակագիր Լէօ, և իր ձեռագիրը որ յաջողեցանք գտնելու և կովկաս թերթին առաջին էջին լուսանկարը:

Յ. Զեքե Յարթեմ Տոմարեանց
 45 տղ մայրի Դրչեանց շնորհ
 յարգանքով Յարթեմ Յարթեմ

Յ. 11. ապրիլ 1842 թ. Բ

Յ. Կ. Կարինեան

3 Ձեռագիր Յակոբ Կարինեանցի

ԳԱՐԻԻԷԼ Ա. ՔՅՆՅ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

1802—1889

Տէր Գարիիէլ Մագիստրոս Ա.Ք.Յ. Պատկանեան ծնած է Թիֆլիզ 1802 Փետրվար 26:

Իր հայրն էր Սերովրէ վարժապետ Պատկանեան որ ծնած էր Պոլսոյ մէջ, և մանկութեան տակն զրկուած էր Ս. Ղազարու վանքը և Թրիէստէ:

Սէրովրէ Լայերէն լեզուն լուսովրելով 1792ին կը վերագտանայ Պոլիս, ուրկից 1793ին կը մեկնի Թիֆլիզ, անկէ 1807-ին Նոր-Նախիջևան

և 1809ին Աստրախան՝ իր Գարիիէլ զաւկին հետ որ ան ժամանակ 7 տարեկան էր: Հոն Գարիիէլ՝ Ապարաիեան ուսումնարանը կը յաճախէ, ուր կը գտաւ խօսէր իր հայրը մինչեւ 1819 թուականը, ուրկէ ելնելով 1817 թուին Յովհաննէս Արքեպիսկոպոսէն կը ստանայ ուրար և միեւնոյն ժամանակ հոգեւոր դպրոցի ուսուցիչ կը նշանակուի, այդ պաշտօնին մէջ մնալով մէկտեղ 1821ին նշանակուեցաւ տեղւոյն հոգեւոր կոն-

ԱՄԵՆՈՒՆԵՆ ԽՈՆՈՐՀԱՏՈՅՑ
ԶԱՆՈՅ ԵՐՈՐԷՑԻ:
27. 07: 4. 07:

Ձեռագիր Սերոբէ Տ. Պետրոսեան Հայր
Գարրիէլ Քն.ի

սխառայի տանն սպեռ և տաջնարդի
քորառւղար և թարգման:

Սերոբէ Պատկանեան հեղինակած է
քերթումններու հասար մը որ Մոսկուա
տպւած է:

1825ին տիրացու Գարրիէլ զոր-
ծակից կ'ըլլայ Աստրախանի Փոխ-Նա-
հանգապետին Հայերուն երգում ընել
տալու պաշտօնով: 1829 Փետրվար 14ին
սարկաւադ կը ձաճաղարուի և 1827ին
կը հրաւիրուի Նոր-Նախիջևան, Քա-
ղաքային դպրոցի ուսուցչութեան պաշ-
տօնով ուր մինչեւ 1831 կ'աւանդէ հա-
յերէն լեզուն:

1831 Յուլիս 1ին Ներսես Ա. Ն.ի
հրամանով Քիչնեւ կ'ընթաց տեղւոյն Հո-
գևոր կառավարութիւնը թեմական
կոնսիստորիայի վերածելու համար, հե-
տեւեալ տարին 1832 Յունվար 17 Գը-
րիգորուպոլոյ մէջ քահանայ ձեռնա-
դրութեամբ կ'ուզարկուի Նոր-Նախիջև-
ան:

Այդ միջոցին եկեղեցական հաշուա-
կան խնդիր մը հասարակութեան և Ա-
ռաջնորդին մէջ գծառնութեան պատճառ
կ'ըլլայ, Տէր Գարրիէլ երկու կողմէն
այ կը հրաւիրուի հաշիւը քննելու հա-
մար, բայց որովհետեւ այս քննութիւ-
նը նպատաւոր չէր հասարակութեան
համար՝ թշնամութիւն քական իրեն դէմ:
1845ին Ներսէս Արքեպիսկոպոս Կաթո-
ղիկոս ընտրուելով Էջմիածին գալած
էր, Նորնընտիր Կաթողիկոսը փափաքե-
լով Նոր-Նախիջևանի ժողովրդին



5 Գարրիէլ Ա. Քն. Պատկանեան
խմբագիր Արարաշի

սիրտը շահիլ՝ սրուն քաղաքապետին
էր Յ. Խալիպեան՝ որ Տէր Գարրիէլի
թշնամին էր՝ զինքը Նախիջևանէն իր
գերդաստանովը հեռացնելով Թիֆլիզ
փոխադրեց, այդ ժամանակ իր գաւառի-
ներն ալ որոնք կ'ուսանէին Լուգարեան
ձեմարանի մէջ՝ հանուեցան դպրոցէն,
և եկան իրենց հօր քով որ ոչ մի պաշ-
տօն չունենալով նիւթական նեղ վիճա-
կի մէջ մնացած էր: . .

Չյուտահառեցաւ Տէր Գարրիէլ և
ջանաց կրօնաւսոյցի պաշտօնը ստանալ
Թիֆլիզի արքունի ձեմարանի մէջ ո-
րուն Հոգաբարձուն էր Ժէնէրալ Սմիր-
նովը, և երբ հոգաբարձուն 1846ին Ներ-
սէսի կտրմիքը հարցուց այս մասին,
Ներսէս պատասխանեց թէ ինք մտադիր
է Տէր Գարրիէլը տեսուչ նշանակել Ներ-
սէսեան դպրոցին մէջ:

Եւ արդարեւ 1850-ին Կաթողիկո-



Ե. ՏԻՒՆ. ՀԱՄԻՐ 7 1850 ՀԱՅՏԻՄՅԱՆԻ 21.

ԼՂԻՏԻՎՈՐՈՒԹՅԱՆ

Հայաստանի բարեբաղձ մամուլները երբ որ Հայոց ազգը մեզ հանդիպում էր, նրանք բոլորովին աշխարհի վրայ, շատ Հայերին ինչ-ինչ բարիքներ կոչել, և այն անը որոնք վաճառականներ էին, և այդպիսով մասնավորապես ծառայություններ, և ոմանք ևս պահանջ կամ ուսանող հետևելով երևելի են եղան:

Պատմություն մեզ շատ օրինակներ կան, բայց զոյա մեջ անկի հետաքրքրություն անմասնաբաշխ է, որ ոմանք լինելու և անկի առաջ լինել, բայց իրենց ազգով տեսած բաներն զրեկ են: Այդպիսով արժանի են առ վերահասություն, ո՛ր միայն ինչ-ինչ մասին, այլ և ընդհանրապես, որ նրանով յայտնվում է թե 150, 200 տարի առաջ Հայոց աշխարհաբար լեզուն ինչպես էր կամ թե այն զրոգներով ճանաչել ինչպես էր, ո՛ր բանն էր ևս, և առաջին ցանկալի դարձնում կամ զրեկու: Մամուլներն որպիսի միջոցներ են պահում:

Բայց հետևելով ստորագրված ցույց է տալիս մերոգրել մեկ քան չհասկանալի լեզուով կա լեզուաբաններով մամուլներ Թերևսայի պոլիտեխնիկական մամուլն էր, այն օրերումը ուսանող մարդիկ, երևելի արհեստագործ, մեծահասակ, զբաղված, շատ յուսալիցապես մամուլի մեջ: Բայց մեծ թաղանթը որ մեծ մեծ պատկերներով, դրամաներով, մամուլներով, ինչ պատահական ձևերով են այն ժամանակները, և կամենալով բարձր լեզուաբանաց թաղանթաց արդու:

ԱՐԱՐԱՏ

6 Եկերոզ Թուսանայ քերթր

աը իր խոստացումը կատարեց, սուսանց սակախն հարցնելու թէ այդ հիւզ տարւան մէջ Տ. Գաբրիէլ իր ծանրութիւնը ւամ օրերը ինչպէս անցուցած էր:

Տէր Գաբրիէլ այն ամենները բողոքած էր Թիֆլիզի մէջ գիւերօթիկ վարժարան մը, ուր աշակերտները կը սովորէին Հայերէն, Վրացերէն, Ռուսերէն, Թրանսերէն, Գերմաներէն, Նոյնպէս կարգի դրած էր տպարան մը և սկսած էր հոն տպել Արարատ շաբաթաթերթը:

1850 Սեպտեմբեր ամսուն հրատարակել սկսած է Արարատը ինչ որ մեծ ընդունելութիւն գտաւ Հայ հասարակութենէն, թերթին գլխաւոր տառերը թիւններէն մէկն այն էր որ ժամանակին պահանջման համաձայն աշխարհաբար կը հրատարակուէր, սակայն այլ և այլ արտածաներով 1851 Մարտին դադարեցաւ, փեց ամիս հրատարակուելէ ետք:

201
նկարներ անկի անկէ: Ս. Երայէ իմ Ս. Երայէ- քաղաքը հարգեց մեծացց իրենս համը գեղարարութիւնս տեղ: Ինչպէս որ ինչ-ինչ զիտուց թաղաբար ունի Ս. Երայէ, Պրատուց թաղաբարութիւնս ունի Ս. Երայէ (այնպէս) իրաւաց իրենց ունի Ս. Երայէ (այնպէս) (Արքեպիսկոպոս) որ իրենցինքն հիւսնալի: Ինչպէս որ մեկ մամուլն Հայոց թաղաբար համը էր ինչ-ինչով: Վերջապէս մոյլ մտ: Բայց պարզապէս Հայացի ճանապարհորդը Ս. Երայէ իր բերաւոր ձեռքով մեզ միայն այն բաները հանդիպէ և արժանի յիշատակութիւն, որն որ իրենս անց յարմար է գտել:

Սրա տեսածն էր լեզուով կա լեզուաբանաց ցույց թէ այս տարաբարութիւն լեզու մտք և արեւ, արեւ համը, յայտնի չէ: Ինչպէս լեզուայն այդպիսի արհեստութիւն լեզու ենս տալ: Գուցէ թէ շատ մտղիկ ունի այլ պատկեր գրութիւններ, այս հրատարակելով պատճառ կրնի որ այն գրութիւններն ևս ի յոյ լեզուովն: Ինչ որ Հայացի լեզուայն արհեստութիւն է, ինչ ցանկալի չեղող: անպար թաղաբարութիւն մէջ թէ և արա մեծ հասցանքով: Երայ Մամուլներն իրենցինքն և այլն չի թիւր, որոշ: այս արդէն թէ յատարարան է:

Ձեր Խեղճ

Հայաստանի ԼՂԻՏՎՈՐ Օրոգ

ԼՂԻՏՎՈՐ Հայ

Չեմք անցած Առաջիկա զրբերու մէջ գտող մեկ Հայ ճանապարհորդի արհեստութիւն, որ 1683 ին, Հայոց առաջին, զիտուցէ և Թրանսերէն կրէր, և այնպիսի թաղաբար զիտուցութիւն Ս. Երայէ քաղաքը տարաբար է: Բայց աշխարհաբար մարդ կրէ և լեզու չի: Ինչպէս Ս. Երայէ լեզուայն լեզուայն արհեստութիւն, ինչ ցանկալի չեղող: անպար թաղաբարութիւն մէջ թէ և արա մեծ հասցանքով: Երայ Մամուլներն իրենցինքն և այլն չի թիւր, որոշ: այս արդէն թէ յատարարան է:

Գրիշ: Ե. Լ. Մամուլներ:

7

Արարատի 98րդ կըր

1851 Մայիսին Եկերոզ Կաթողիկոսի հրամանաւ Տէր Գաբրիէլ վերադարձաւ Նոր-Նախիջևան, որուն Առաջնորդը Մատթէոս Եպիսկոպոս տեսնելով որ Խալիպեանը Կաթողիկոսի կանգակին վրայ յայտնուելով չէր ուզեր եկեղեցական գումարներու հաշիւը տալ, բողոքած էր Ներքին Դործոց Նախարարութիւն և երբ Տ. Գաբրիէլ Մայիս ամսուն Նոր-Նախիջևան հասաւ, առաջնորդը ծիրանի փիլոն չնորհեց սնոր և Հոգեւոր կառավարութեան նախանգամ ու եկեղեցիներու մէջ իրեն փոխանորդը կարգեց ու հետը Խրիմ տարաւ, ուրկէ վերադարձին Տէր Գաբրիէլ խնացաւ որ Եկերոզ Կաթողիկոս ըտրիանայով Մատթէոս Ա. Ե.ին հոգեւոր կառավարութեան նախարարութիւնը իրեն տուած ըլլալուն համար, Սարգիս Եպիսկոպոս Ջալալեանը կը գրկէ վիճակը քննելու:

Քահանաները այդ բանին գէժ փո-

կեանքի 99րդ էջը, ուր Փարիզ ուղևոր-
ւած է Բաղիբեցի Շահնուբաս եւ այցելած
թագաւորին եւ գրած իր
սպաւորութիւնները:

Խալիպական տէրն էր Կազուլիանս-
 ինք իմ' հաշիւ չէր տար և թէ կը ճրգ-
 մէր Պատկաննանը, մինչդեռ այս վեր-
 ջինը կը բողոքէր թէ Սինոդը լոնչ ի-
 բաւամբ զինքը քահանայադործելէ զադ-
 րեցուցած էր ։ Իր բողոքողիւրը ընդար-
 ձակ էր և մանրամասն որուն մէջ բա-
 ցատրած էր Խալիպականի կատարած մե-
 քենայութիւնները որոնք մինչեւ ան-
 դամ ներքէս Կաթողիկոսի պէս անկա-
 շատ ուղղութիւն մը սխալեցուցած էր ։
 Երկուր մաքառումներով Տ. Պար-
 րիէլ շատ մը վնասներ կրելէն ետք, ա-
 նոր իշխամիւնքը վերջապէս յայթանա-
 կեցին և 1853 Ոգոստոսին թանաքեկ

9 Արարատի 100րդ եջը
ուղեւորութեան շարունակութիւնը

1860-ին բանտէն ազատելով սկսաւ մանկավարժութիւնով պարտադիւ Նոր-Նոսիթիէականի մէջ, բայց որովհետեւ ա-նոր արդիւնաւորութիւնը այդ բանը խաղա-կան ուսումնասիրանին համար, որ մեծ ծախսերով չլիւտած էր Թէոդոսիայի մէջ (տես հիշատակութիւն խաղաղականի)

1011

որ Ղափինին որ արդար է եղեր խնայ, այս վերադարձ չառաջին և շատ անգամներն ջերման տեղին ամեն այլ գինի է ցրել. թէ Տառազնին, և թէ զարդինին, և թէ այն մեծ Տառազնի՝ որ 17 կիսի (սառնակ) կայ վրան, որի այլ յոր է գինով. և թանկէ՛ն արեւ է բարձրացել երկին, ամենեւին եկած են՝ մեծ և փոքր՝ արք և կա ծաղիկներ և սպար, 7 որ ինքան և խնամ են փով. երկին ամեն շնչուն պատել է արեւ, այնպիսի խնամ են, զիս շատ գինին է անձն է մաշիւր տեսել որպէս հիմապի և զարմանայի բան է:

Այսին փառքով երկրում այն մտ մտեալն թաղարի եղալին և իւր կինն տալան զիս էր արդար խնայել, կամ ցան զիս պատել ընդ ինքնի քաղաք: Կա ևս զիւր սերունդին, և զիւր խաղիւնքին, և զամենեւն զիւրանին և այլ ինչ որ կայ՝ զայս ետուր մէջ. որ ես էի, և իմ թեմականն Տառազնի Հոգեւոր. Հարմար զարեւոյ յետ, և անպար խնայել թաղարի եղալին և կինն, և հազար իմ թեմէ՝ ճիւղներն. թէ Տառազնու զմեր որդեւորներն, մեր պատանաւն՝ ցոյ՝ թէ Մատուս այս եղաւ թաղարեւորներն և այս բարեւոր. թանն Տառազնու պահեցէ ատա և է հանդերձութիւն:

Եւ թէ մի բոս միջն զմեր՝ յան զմեր աւելի անձնութիւն էր լաղան և լիծեղանայի. Եւ առաւել մեր տեսած բանն՝ միջն թէ ապր թէ չէ լիծեղար պատմել լիպար. ալոր լիծեղան է Տառազնու:

Պատմուցաւ երկին 19 արեւիցիսկոյս կայ. 800 քաղաքներու կայ. 50000 առաւելից կայ. թող զանաւորն՝ որ ամենեւում 100000 քաղաքներ կան տեղեւորով:

Դարեւաշ շոր Տառազնու կայ մեծ և փոքր, ամեն զեղեղի. շինարար և պարտոր. լին և պայծառ. Դարեւաշ Պատմուցին երկրէ լիծեղան 230 արմա՛ն:

Դարեւաշ 3000 կամողիկով եկեղեցի կայ, որ հանապաղ պատարայ կա մատուցի և մարտնեմին կուլինի. Մ. Ե. մի թաղարի երկին է. եւթն թաղարայ (հաս իսկ) մինն այս է. յան զիւրա՝ նիւն և ցան զիւրեկն փոքր այս է. ապա ուժով է և մալով. և կոճարտ պիտուր բարձր և շատ ուժի. զորս պարտար չկայ եւթն թաղարայ մէջն զայս պարտարութիւնն Տէր Մատուս Տառազնու և անշար պահեցէ միջն է հասարած աշխարհի ամեն:

Արարատ 101րդ հշր, ժարունակութիւն եւ վերջ ուղեւորութեան:

ուստի 1831 Յուլիսի աքտորուեցաւ Վէստիայ, և 1862-ին Կոստրամ ուրկէ 1863-ին Յուլիս ամառն անգլափոխուեցաւ Պետերբուրգ:

Տէր Գաբրիէլ որ երբեք մարդու կարօտ չէր եղած իր գաւառներուն վերջն անգլափոխուած քահանան ստիպուեցաւ մայրաքաղաքին մէկ անկիւնի ծխախոտի խանութ մը բանալով ճարել իր սպորուսը:

Եփրեմ վարդապետ Պետերբուրգի տառփնորդը որ հինուայ ի վեր քարեկամ էր Տէր Գաբրիէլին փոխանակ սարսափելու մարդկային կեանքի անհաստատ վիճակէն՝ կը հեգնէր քահանան ըսելով — «Վա՛ն, որ քակէ իր դառնաւորն տաղ. իսկ ես կ'առնեմ կաղարիսն Խաչատուր աղային որ քեզ եկեղեցիից օղնէ, քանի վարձկանք են ի տուն Աստուծոյ հաջորդի և գուռ տատ սովորման կրօնչի», և արդարեւ կ'երթայ կը պատմէ Խաչատուր աղային, որ երբ կը հարցնէ թէ

որչա՞նի պէտք է առլ, Եփրեմ վարդապետ կը պատասխանէ թէ — «Հինգ առաքլի աւելի է նուաղ չէ» և միւս օրը ժամկոչը ծիծաղելով կուգայ և կը հրաւիրէ Գաբրիէլ քահանային որ երթայ եկեղեցւոյ զրատեհեակը և սատնայ ամսական առճիկը:

Տէր Գաբրիէլ լուս գիտնալով թէ ժամանակը կուգայ և ան կը կարողանայ պարտահասոյց ըլլալ ամէն ամառ կ'երթայ նշանակեալում և առաքլին սատնայ:

Իրերը այս վիճակի մէջ էին երբ Պալայ Պատրիարք Ներսէս Վարժապետեան նախախնամական դեր մը ունեցաւ Պատկանեանի վշտաշարչար կեանքին վերջ մը գնելու և 1877-ին միջնորդեց Ռուսիոյ Չարին սրպէս զի վերջապէս քահանային չարչարանքը վերջ գտնայ: Այդ միջոցներուն Խորէն Ա. Ե. Նար-Պէյ սր Պետերբուրգ կը գտնուէր կորովի կերպով աշխատեցաւ և միջնորդեց 1878 Սեպտ. 8-ին 1879 Յունվար ամիսին Պատկանեան նորէն ստացաւ քահանայութիւնը որու վրայ աւելցուց Գէորգ Դ. Կաթողիկոսը խաչ, ծաղկեայ փիրն և կամեաւեա 1879 Փետր. 20-ին կանգաւով. իսկ 1880 Յունիս 3-ին կանգաւով անոր չնորհեց աւաղ քահանայութիւն և Մադիսարտ պատուանուն:

Վեհափառ Հայրապետին տնօրինութեամբ էջմիածինի Սինոդը Տէր Գաբրիէլին յանձնեց կրօնասոյցի պաշտօնը որ տասջ կը վարէր յիշեալ Եփրեմ Վ. և նշանակեց առճիկ 350 առաքլի Այսպէսով վերջացան Պատկանեան Մագիստրոսի չարչարանքները և 1882-ին Յունվար 18-ին ի. ք. արժանի եղաւ իր քահանայութեան յիսնամեակը սղջունելու:

Վախճանեցաւ 1889 Ապրիլ 13-ին. իր դապաղին վրայ Պ. Թ. Զաքարեան:

դի խօսած դամբանականէն մաս մը կը հրատարակենք:

Նա առաջիններէցն է եղել, որ հիմք է դրել ռուսահայերիս մեջ հայ լրագրութեան. նա քսանեակ տարիներ ղեկավարել է հայ սերնդի դաստիարակութեան համար. նա ծաղկեցրել է հարստացրել է մեր գրականութիւնը իր սխալներէն բանաստեղծութիւններով. վերջապէս նա մաշել է իր կեանքը Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու պաշտօնէութեան մէջ: Եւ այդ բոլոր ասպարեզներում նա փալկել է միշտ իր բուն եռանդով, իր անկեղծ ազգասիրութեամբ, իր զօրաւոր տաղանդով եւ անխաբիա առաքինութիւններով:

Դառն եւ չափազանց դժուարին է եղել նորա գործունէութեան օրերը: Հալածանք, մահնութիւն բանս եւ պանդխտութիւն — այդ ամենը կրել է նա իր կեանքի մէջ. բայց իբրեւ մի անսասան ժայռ, նա դիմացել է բոլոր փոքորիկներին եւ անհասանելի հաստատար

կամութեամբ տարել կեանքի ալեկոծութիւնները՝ միշտ իրեն առաջնորդ եւ դէկավար ունենալով արդարութեան եւ իր ազգի սերը:

Իր հրատարակութիւնները. — 1822 Վարդապետութիւն Ուղղափառութեան Հայ Եկեղեցւոյ. — 1823 Հնդարձակ պատասխան 1824ին տեղի ունենալիք ծրուագրողի պաշտպաններուն. — 1825 Պատմութիւն Ալեքսանդր Մակեդոնացւոյն. — 1854 Սանդուխդ Կոյսի Մահը. — 1854 Մրմունջը Յիսուսի. — 1854 Հայկերդ. — 1855 Արամբեդ. — 1856 Արայի Մահը. — 1857 Անուշաւան. — Հռիփսիմէ. — Մահ Պարեաի. — 1858 Զուէն և Փառնակ. — Պարոյր. — Միջնալէպ. — Ուսումն, Ուսուցիչը և Ուսումնարանը. — Երգագիր պատմութիւն Հայոց. — Սանդուխտ Կոյսի եղբոր Արտաշէս մանկան Փրկութիւն. — Ծաղկաբաղ կենսագրութիւն Ներսէս Ե. Կաթողիկոսի:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

1830-1866

Ծնած է Նոր Նախիջեւանի մէջ 1830 Հոկտ. 27ին, իր հայրը Ղազարոս Նախանդեան ծանօթ վաճառական էր յայտնի Ուստա Ղազար անունով: Նախանդեան իր տղայ հասակին մէջ վատայտ էր և նիհար էր, սակայն վերին տառիճանի ժիր, կայտառ ու սրամիտ. իր արտակարգ ուշիմութեամբ իրեններուն և օտարներուն ուշադրութիւնը գրաւած էր: Ինչ տարեկանին Տիրացու Օգ-

սէն անունով մէկէ մը կը ստանայ իր նախնական կրթութիւնը և ապա կը շարունակէ Տէր Գաբէլէլ Քհն. Պատկանեանի քով հինգ տարւոյ չափ. ուսումը աւարտելէ յետոյ կը հասկնայ որ ինք վաճառական ըլլալու համար ստեղծուած չէ և թէ աւելի բարձր նպատակի մը կը ձգտի այն է ուսանիլ և ուսուցանել, ուստի հոգեւորականներու դասակարգը կը մտնէ իբր տիրացու:



11 ՄԻՓԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԳԵԱՆ

1845/ին երբ Ներսէս Ե. Կաթողիկոս այցելեց Նոր Նախիջևան, հրամայեց հաջւորակոննհրու սր յոճախին Մկրտիչ Եէկէնեան վարժապետի դպրոցը, քերականութիւն և ին սորվելու, Նալբանդեան իր ընկերներուն մէջ յոստաջողէմ ըլլալով շուտով աւարտեց իր ուսումը և Պետրապոլիս տառջնորդ Մատթէոս Վեհապետեանի Նախիջևան գտնուած միջոցին, անձնական քարտուղարի պաշտօնը ստացաւ և տառով ստիւթը ունեցաւ ազգային հաստրակական գործերու խառնուելու։ Նոյն միջոցին եկեղեցական-դրամական խնդիրներու մէջ Նալբանդեանի գէմ կ'սկսի պոյքարմը որուն տառջնորդն էր Յարութիւն աղա Խալիպեան, պիտի պատժուէր իբր հոգեւորական, բայց անմիջապէս կը հրաժարի և կը հեռանայ Մոսկուտ, ուր իր գլխուոր նպատակը կ'ըլլայ լոյս և ուսում տարածել Հայերուն և մաքուր



12 Հիսիսափայլ
Կովկասահայ Երուդ Թերթ.

ևիկ տղիտուէթիանի դէմ՝ հան կ'աշխատի
 ուսանիկ Գրանսերէն ինքուն և կը թարգ-
 մանէ Էօթէն Սիւի Թափառական Հրետ-
 յի Ա. հատարը ճոխ և զնչորդ յառաջա-
 րանով մը որուն մէջ կը պարզէ իր
 տեսութիւններն կզերակոծուած ինքն զեղ-
 ծուհիներու մասին և որ կը տպուէ
 1857 թին :

1858ին Սահեփ. Նազարեանցի հետ
կ'սկսի հրատարակել Հիւսիսատառյ
ամսաթիւերի, որուն գլխաւոր աշխու-
սակիցը կ'ըլլայ Կոմս Էմմանուէլ և Փա-
րսի Յովակեան ծածկանուէրով: 1858-
59 չրջանին բացի լատնատեղծութիւն-
հեթէ՝ որոնք անմտադուցած են զինքը,
30ի չափ կարեւոր յօդուածներ ունի:

Հիւսիսատփոյցի հրատարակութեամբ ծագեցան երկու կուսակցութիւններ նոր և հին, Նալբանդեան նորին պաշտպանը եղաւ որով հին գլուխներ սկսան հայտոյել և մինչև և մատնութեան գիմել: Նալբանդեանց անտարբեր չի մը-

Հաւատարմութիւն
 թիւ 1858 թ. 1858 թ. 1858 թ.
 1858 թ. 1858 թ. 1858 թ.
 1858 թ. 1858 թ. 1858 թ.

13 Միւսայիկ Նալբանդեանցի Ձեռագիրք

Նոր նաեւ Հայրապետան-Ստաւրոսի
 կողմէն և կը շարունակէ ազգութեւն և հզօր
 յօդուածներով պաշտպան ըլլալ եկեղե-
 ցական գրամներու համար յարուցուած
 դատին : Նալբանդեանցի վից ստորի մը-
 նաց Մոսկուա անընդհատ գրողմունք-
 ներու մէջ որով բոլորովին խանդա-
 ւեցու իր սուղջութիւնը և հիւանդա-
 կու ծրք ուստի իր աշխատութեան ար-
 քիւնքով ինչպէս նաեւ Ստաւրոսի
 ու Մատթէոս Ս. Վահագնեանի նիւ-
 թական օգնութեանց շնորհիւ զնաց ար-
 տասանման հոնքային ջուրերը և քիչ
 յետոյ կրկին վերադարձու Ռուսիա :
 1859ին կը դադարէ աշխատակցիլէ Հիւ-
 սիստոպոլսին և կ'ըրադի Մասնի Բա-
 րաշանի գործի խնդրով որով 32,000
 ռուբլի արժողութեամբ անշարժ կալ-
 ուած կտրուած էր Նախիջևանի Հա-
 յերուն օգտին , այդ գործով 1860ին
 Նախիջևան գացած և գարնան քննու-
 թիւները աւարտելով ընտրուած է հա-
 տարակութեան հաստատմամբ : Իր
 թշնամիները կ'ուզեն խաբանել ընտ-
 րութիւնը բայց ինք կը յաջողի յաղ-
 թել և էջմիածին կ'երթայ իր թուղ-
 թերը կը վաւերացնէ երջանկայիտակ

Մատթէոս Կաթողիկոսն՝ և անկէ ար-
 տասանման կ'ուղեւորի ինքզինքը սեղ-
 մուած գտնելով Ռուսիայի նուազ քա-



14 Միւսայիկ Նալբանդեանց Պոլիս լուսանկարուած Ազատի Ասուած Բանաստեղծութեամբ.

զաքակրթութեամբ չբջանակներուն մէջ, կ'ուզէ իրենաւոր կերպով կազմարեւ հոն իր ընկերակրական Գրական և Ազգային յատկանիշերն 1856 և 1858ին եւրոպա կ'այցելէ և 1860ին Պոլիս ուր Սահմանադրութեան հաստատման մեծ օգտակարութիւն կ'ունենայ իր ազատաշունչ գաղափարներով, և Պօլսեան Ազգայական վէճին վերջիններուն գլխաւոր դերակատարը կ'ըլլայ:

1861ին Լոնտոն կ'երթայ և յետոյ Փարիզ ուր կը հրատարակէ Երկու Տողանուն գրքովը որ Այվազեան Գարրիէլ վարդ. ի նամակները կը պարունակէ ազգային կեանքի մասին:

1862-ին կը հրատարակէ Երկրագործութիւն անուն ընկերակրական դեղեցիկ գիրքը Սիմէօն Մանիկեան ծածկանուամբ և ապա կ'ուղեւորի Հնդկաստան՝ 70 տարի առաջ նոր Նախիջևանի համար կատկուած գումարները ձեռք բերելու նպատակաւ: Կտկաթայի մէջ շատ նեղութիւններ կը քաշէ, շատ արգելքներու կը հանդիպի անգլիական լեզուն և օրէնքները չը գիտնալուն համար և կ'ակախ ուսանիլ լեզուն և օրէնքները, յետոյ կը մեկնի նորէն Ռուսաստան, դրամէն մաս մը ձեռք անցնելի վերջ, Այս անգամ իրեն կ'սպասէր բանտարկութիւն, տէրութեան մեծամեծ կասկածներ ներշնչած էր իր ուղեւորութիւններով և գաղափարներով, ուստի

անմիջապէս ձերբակալուելով կը զրկուի Պէտրօպովլովսկի լսիւղը ոչ վտանգաւոր քաղաքական յանցաւորներու յատկացումէր:

Բանտարկութեան պատճառը կը վերագրուի թշնամիներու մտայնութեան խի ոմանց ենթագրութիւնը գաղանի ընկերութեան մը անդամ ըլլալը կը կարծուի:

Իր հայրը սրտին ցաւէն կը մեռնի և մայրը կը խեղագարի:

Բանտի խնամ մթնոլորտը բոլորովին կը քայքայէ իր արդէն խանդարուած տաղձութիւնը և վերջապէս թուքախտը իր աւերը կը դործէ, սակայն ան բանտի մէջն ալ կ'աշխատի ու խոյոց աշխարհաբաւ լեզուի քերականութիւնը կը պատրաստէ, ուրի նաև անտիպ գրութեանքներ 1866 Մարտ 31-ին կը մեռնի 3 տարուան բանտարկութենէ ետք, և մարմինը իր փափաքին համեմատ Նոր Նախիջևան տարուելով Ապրիլ 14-ին կը թաղուի Ս. Խաչ վանքի ձախ դրան տաճնը:

Իր հեղինակած գրքերը. — Թափառական Հրեայ, Էօմէն Սիւ. — Երկու Տող. — Հիւսիսափայլ Ամսաթերթ. — Երկրագործութիւնը որդէս ուղիւ ճանապարհ. — Երգերը. — Մինին խօսք միւսն հարան, և այլն (1858)

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ ՔԱՄԱՌ ՔԱԹՈՊԱ

1850—1892

Ռաֆայէլ Պատկանեան ծնած է 1830
Հոկտեմբեր 5ին Նոր Նախիջևանի մէջ,
իր նախնական կրթութիւնը ստացած է
իր հօր Տէր Գարրիէլի մօտ. իսկ հիմ-
նական ուսում ստացած է 1840 թուա-
կանին մանկով Լազարեան ձեմարանը.
բայց Պատկանեան չէ կրցած ուսարանի



5 ՔԱՄԱՌ ՔԱԹՈՊԱ ՆՐԻՏԼԱՍԿԻ

իր ուսման ընթացքը՝ ստիպուած ըլլա-
լով թողալ վարժարանը իբր եկեղեցա-
կան սան վերջին դասարանէն թողելով
Լազարեան ձեմարանը իր հօր թշնամի-
ներուն պատճառաւ:

1849ին Թիֆլիզ գացած է իր հօր
քով. Հոն Ներսէսեան դպրոցի ուսուցիչ
կ'անուանուի որ ասուն հայրն ալ տե-
սուչ էր դպրոցին և կը մասնակցի 1850ի

իր հօր հրատարակած Արարատ շաբա-
թաթիւրթիւն Այդ միջոցին կը հրատա-
րակէ իր առաջին բանաստեղծութիւն-
ները գրաբառ լեզուաւ. ուրկէ ետք
սկսած է գրել աշխարհաբառ 1851—52
իր հօրեղբորդի Քերովքէ Պատկանե-
անի հետ, Դորպետի համալսարանը կը
յաճախեն, բայց նիւթական միջոցներու
պակասութենէն կը թողուն Դորպետի
համալսարանը և կը հաստատուի Մու-
կուա՝ համալսարանի պատմական-լեզ-
ւագիտական դասախօսութիւններուն
հետեւելու նպատակաւ. Այդ թուակա-
նին լուսանկարն է որ կը հրատարա-
կենք և «կտակը» ստանաւորը որ գը-
րած է նոյն ժամանակ:

1854-ին Մոսկուայի մէջ հայ ուսա-
նողները գրական ընկերութիւն մը կը
կազմեն Գա Մամի Գա Թի Պա գրական
անուան տակ, այսինքն երեք հիմնա-
դիրներու անուանց սկզբնաւորները մի-
ացուցած անուն մը, իրենց նպատակն
էր ինքնուրոյն և թարգմանօրէն գըր-
ուածքներ ժողովրդական հրատարակու-
թիւն ընել, որուն բանաստեղծական
մասն կը պատկանէր Ռաֆայէլին և որ
առիթ մը եղաւ իր ճօն բանաստեղ-
ծութիւնները գրելու:

Այս Քամառ Քաթոպ գործը հրա-
տարակուցաւ ընդամենը 5 տետրակ և
որու մէջ երեւցաւ առաջին անգամ
Մայր-Արաքսին և Դօդօխեանցի Ծի-
ծեանակը:

1855-ի սկիզբները Պատկանեան

Մոսկուայի մէջ երկու տարի անցրելէ
հաջորդէր անգլոփոխութիւն Պետերբուրգ
Չինարական բժշկական ակադեմիան
մանկութեան նպատակաւ և կ'իրադարձուի
թէ և բոլոր ինք փոխութիւն իր սրտումը
կ'ընտրէ Արեւելեան բոսնից ուր և կ'ա-
ւարտէ 1860 թուին իր բարձրագոյն
ուսումը:

Թեան, միւսներու հետ մտադրել ինք
կը շարունակէ սոյն ծածկանաւոր Քա-
մառ Քաթիկոս և անկէ վերջ աջնակս
կը ճանչցուի ամէն կողմ:

1860 թուին իր ուսմանց չրջանը
աւարտելէն հաջորդէր Վնայ Պետեր-
պուրց իր հրատարակչական ասպարէզը
չը թողելու նպատակաւ: ձեռք կը բռն-




16 Քամառ Քաթիկոս Ռաֆայէլ Պասկանեան

Բոլոր ինք այդ միջոցին եւանդալ
կ'ըրադի Քամառ Քաթիկոս ընկերու-
թեան հրատարակութեանն և այդ
5 տարեկան մէջ կը ապէ 18 բանաս-
տեղծութեան, և որոմհետեւ ինքը
եղած էր ամենէն եւանդալ և բնական-
աւար մէկ աշխատակիցը սոյն ընկերու-

րէ հոյ և օտար լեզուներու տաւեր
պարունախող ասպարան ու տնական կը
հրատարակէ իր գրութեանքները:

Նոյն տունները Մարկոս Ալարեկ-
եանի հրատարակած Կուռնի ամսաթեր-
թին մէջ ունի տասնէ աւելի բանաստեղ-
թութեան, Վարդան Մամիկոնեանի



17 Պատկանանի վերջին լուսանկարը

վրդապանութիւնը և քանի մը արձակ-
ներ Թոմա Բոցարիս, Թրովաթորէ, Խա-
չակրաց արշաւանքը Մ. Մէնասիրեան
ծածկանունով:

Քամառ Քաթիպա դո՛ւ չը մնալով
այս վիճակէն փափաքեցաւ իրեն յա-
սուկ թերթը ունենալու. ուստի 1863

սեպտեմբերին հրատարակեց սուսջին
թիւը Հիւսիս թաղմալէսի շաբաթա-
թերթի:

Աշխատակիցներու թիւը մեծ չէր
և բացի իր հօր Տէր Գարրիէլէն գրե-
թէ ոչ ոք ունէր, այնպէս որ ինք զբաղ-
ուած ըլլալով թերթին վարչական և
գրական բաժնիներուն չը կրցաւ բա-
նասանդածութիւններ գրել: Հակառակ
Պատկանեանի մեծամեծ ջանքերուն և
նիւթական զոնողութիւններուն թերթը
մեծ յաջողութիւն մը չունենար և կը
դադրի 1864-ին:

Այդ թուականին կ'ամուսնանայ
Ատեմից Յովսէփէ Մելիք-Ջարմեանի
աղջկան հետ և Պետերբուրգէն կը մեկ-
նի 1866-ին դէպի Նոր Նախիջևան,
վաճառելով իր ապարանը:

1867-ին իր ծննդավայրը վերա-
դառնալով կը ձեռնարկէ կազմել «Ժո-
ղովածոյք օտարագգի բառերի Ն.Նախի-
ջևանցոց լեզուի մէջ մատած» որ ըստ
տեսու 1870 թուականին, անկէ ետք
իր եղբոր Քերովբէ Պատկանեանի ա-
ջակցութեամբ հայ բարբառներու ու-
սումնասիրութեան համար նիւթեր հրա-
տարակել սկսաւ, այս մասին կը խօ-
սինք Քերովբէ Պատկանեանի կենսագը-

Իմ խոյն

*Երբեք իմ հայ յիշատակս
«Ապրիլ էրբեք» թաղի յայտն
Լիւթիս իմ աչք իմ առջեւ
աչք իմ հայի իմ խոյն:*

Վահագն Վահան

ՊՍԿԱՆԱՆԻՆ ԶԵՌԱԳԻՐԸ

բուժեան մէջ:

Հոն 1837 թուին իր ամսանոյն հետ բացաւ «Օրինակելի Բանախօն» և մնալով քանի մը տարի տեղափոխուեցաւ 1873-ին Ռոստով ուր մնաց մինչեւ 1876:

Այդ միջոցներուն հրաւիրուեցաւ Նոր Նախիջևանի և Պատարաղի թեմական դպրոցներ, ու հայերէնի և ուղարկազ ւիժեան ուսուցչութեան, այցնէն երկուր չը մնաց թեմականներու պատճառով թողուց ուսուցչութիւն 78-ին ու յաջորդ տարին բացաւ «Մանկական Պարտէզ» անուն վարժարան մ'որ շարունակեց մինչեւ 1880 երբ իր և քանի մը ուրիշ անձերու հետ խաճեալութեամբ հիմնուած Արուստական դպրոցին տեսուչ շնամուկուեցաւ: Այս պաշտօնը վարեց իրեն յատուկ եւանդով մը շարունակ 12 տարի մինչեւ իր մահը 1892:

Բայց ի ազգային բանաստեղծ Քամառ Քաթի յի մեծութիւնը հոն է որ 42-ական խոնջ գրական գործունէութեան մէջ միշտ արձագանք եղ և ազգային կեանքի մտաւոր և բարոյական երեւոյթներուն և կենսական բարձր շահերուն և պահանջներուն, այն սմեռ մտածումները և տառապանքներ որոնք կրած են իր ժամանակակիցներ կենդանի կերպով արտակերտացած է իւրեն դարձերուն մէջ:

1877-78-ին խոր կերպով տպուէրուած կը դանդաղ զինքը հարստահարութիւններէն, սակայն տառապած



№ 1 ԳՐԱԾԵՂՆԵՐ ԼՐԱՄԻՐ 1863


ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ ԳՐԱԾԵՂՆԵՐ ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ ԼՐԱՄԻՐ ԼՐԱՄԻՐ	1863 1863 1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863
ԳՐԱԾԵՂՆԵՐ	ԼՐԱՄԻՐ	1863

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ

19

Պատկանեանի հրատարակած թերթը

ներու վիճակը բարեփոխու լուրերը զինքը խանդավառեցին և հարստահարուածներուն անվիճեր պաշտպանը դարձաւ, մարտիկեց բանաստեղծութիւնը, յանդիմանեց Տաճկադէպերու պախարակելի վախկոտութիւնը, քաջութիւնը զանոնք զէպի ինքնապաշտպանութիւնը, վերջապէս Քամառ Քաթիկոս դարձաւ ճշման և հարաման կենդանի բողոքը որ արժարձուեցաւ ուղարկելի մէկ ծայրէն միւսը և շատ արտեր արիւնեց, տոոր համար է որ Պատկանեան շոջուած է «Ազգային Բանաստեղծ»:



ՋԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Յիսուսական Մատենադար կը հրատարակուի պրակ սա պրակ:

10 պրակի բաժնեգրին է. եզրապատի համար 20 Ե.Դ.

Արտատպման 30 Ժամանական ժրամ:

Հասց 2 Ե. Դ. եզրապատի մեջ:

Արտատպման 3 Ժրամ:

Յիսուսական մեք երկուսուսուսներ որ հրատարակուած է 1909-14 ժրամ-
նին եւ որ պատկուած է ՄԱՀԱԿ ԽԵՐԿԻՆԻՆ 1912 ժրամն մըցանակաւ, լոս կտա-
կի բարեխաւսակ հովանի իզմիւրեանցի, բարեգովին ապաւած է: Ամեն կողմէ մե-
զի եղած խնդրանքներուն գոհացում ապաւ համար նկատեն. սիսի հրատարակեն
Հայ երեւելիներու կենսագրականներ, լուսանկարներ, գրութիւններ եւ հմանա-
հանութիւններ իրենց գործերուն հետ, անոնք որոնք հրատարակուած են եւ անոնք
որոնք չեն հրատարակուած այն առին: Նկատելով գործին բազմամտաւ հանգա-
մանք, «Յիսուսական Մատենադար», անոնով պրակներ կը հրատարակեն, ապա-
ւելով Հայաստանի բազմաթիւներին:

ՄԵՐ ԿՆԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

Տարբ

1.	Այ. Սարգիսան	Գանիրէ	20
2.	Գանիրի Սեփարեան	"	20
3.	Յովն. Տէր Մկրտիչեան	"	20
4.	Գաւգին Յիւրեան	լոս քաղաք	40
5.	Հայկ Ժամկոչեան	Գանիրէ	20
6.	Արաշեա Մեարհեան	"	20
7.	Կեան Բամպուզեան	"	20
8.	Պարոպ Գալստեան	"	20
9.	Գալստ Գեղամեան	"	20
			200

Հասց:

LIBRAIRE-ÉDITEUR

VAHAN ZARTARIAN,

Nº 18 Rue Tewfik.

LE CAIRE - EGYPT.

